Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2023 թվականի մարտի 27-ից 30-ը Բելգիայի Թագավորություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Հարություն Ազգալդյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել), մարտի 27-ից 30-ը

4. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ՀՄԿ իրավակիրարկման կոմիտեի 43-րդ նստաշրջանին ՀՀ պատշաճ մասնակցության ապահովում: ՀՄԿ ռազմավարական պլանավորման իրագործման աշպատանքային ծրագրին, Համապատասխանության և իրավակիրարկման ծրագրի միջոցառումներին, Իրավակիրարկման կոմիտեի աշխատանքային ծրագրին առաջարկությունների և դիտարկումների ներկայացում:

6. Քննարկված թեմաները՝

Ծրագրի մեկնարկին նվիրված միջոցառման ընթացքում քննարկվել են՝ Թվայնացում և համատեղելիություն, տեղեկատվության փոխանակում, կանաչ մաքսատուն, կազմակերպված հանցագործության և մատակարարման շղթայի ինֆիլտրացիա, համապատասխանության և իրավակիրարկման ծրագրերի (ՀՄԿ շրջակա միջավայր, ՀՄԿ թմրանյութերի դեմ պայքար, ՀՄԿ անվտանգություն, ՀՄԿ եկամուտներ, ՀՄԿ

մտավոր սեփականություն, ՀՄԿ բարեվարքության և ռիսկերի կառավարման/մաքսային իրավախախտումների մուտքագրման և վերլուծությունների իրականացում, փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքար և այլն):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման ընթացքում ՊԵԿ ներկայացուցիչը բոլոր զեկուցվող հարցերի վերաբերյալ ներկայացրել է ՀՀ ՊԵԿ դիրքորոշումներն, ինչպես նաև ակտիվ քննարկումներ է ունեցել տարբեր երկրներից ժամանած ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՄԿ հետ երկկողմ համագործակցության շրջանակներում պարբերաբար ոլորտային տեղեկատվության փոխանակումներ իրականացնել՝ իրավակիրառման գործընթացները համահունչ դարձնելու միջազգային փորձի հետ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման 2-րդ փուլը ենթադրելու է զեկույցի ընդունում, որը կայանալու է CLIKC հարթակի միջոցով՝ 2023 թվականի մայիսին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

03.04.2023թ.